**Նախագիծ**
**Երկրորդ ընթերցում**

**Կ-1343-27.04.2026-ՊԻ-011**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**Օ Ր Ե Ն Ք Ը**

**«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Քաղաքացիական ծառայության մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-205-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 11-րդ հոդվածի 10-րդ մասում «16» թիվը փոխարինել «17» թվով:

**Հոդված 2.** Օրենքի 31-րդ հոդվածի՝

1) 5-րդ մասում՝

ա. «՝ քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու համար» բառերը հանել,

բ. «չի վարձատրվում» բառը փոխարինել «կարող է վարձատրվել» բառերով.

2) 6-րդ մասում «Փորձնակի գրանցման, ստաժի հաշվարկման, աշխատաժամանակի սահմանման և աշխատանքների մասնակցության առանձնահատկությունները» բառերը փոխարինել «Փորձնակի գրանցման, ստաժի հաշվարկման, աշխատաժամանակի սահմանման, աշխատանքների մասնակցության և վարձատրության առանձնահատկությունները, ինչպես նաև համապատասխան մարմիններում փորձակների ներգրավման պայմանները» բառերով:

**Հոդված 3.** Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 6.1-րդ կետում «15» թիվը փոխարինել «12» թվով:

**Հոդված 4.** Օրենքի 39-րդ հոդվածի 6-րդ մասում «սույն օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերով, 10-րդ հոդվածի 5-րդ և 11-րդ մասերով, 16-րդ հոդվածի 4-րդ մասով, 19-րդ հոդվածի 3-րդ և 7-9-րդ մասերով, 22-րդ հոդվածի 3-րդ մասով, 30-րդ հոդվածի 6-րդ

մասով, 33-րդ հոդվածի 1-ին մասով և 35-րդ հոդվածի 3-րդ մասով» բառերը և թվերը փոխարինել «սույն օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերով, 10-րդ հոդվածի 6-րդ և 12-րդ մասերով, 12-րդ հոդվածի 5-րդ մասով, 16-րդ հոդվածի 4-րդ մասով, 19-րդ հոդվածի 8-րդ մասով, 22-րդ հոդվածի 3-րդ մասով, 30-րդ հոդվածի 6-րդ մասով, 33-րդ հոդվածի 1-ին մասով, 35-րդ հոդվածի 3-րդ մասով և 36-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով» բառերով և թվերով:

**Հոդված 5. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ.**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետի և 2-րդ կետի:

2. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետը և 2-րդ կետն ուժի մեջ են մտնում սույն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ կետից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելու օրը:

3. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետի գործողությունը տարածվում է նաև մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա:

4. Սույն օրենքի ընդունումից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վեց ամսվա ընթացքում: